

տրիարքները այնքան լաւ գգացին իրենց դիրքը՝ որ ետքը Հայոց Աթոռիկոսին ներկայացուցին նուիրակներն իսկ բռնադատեցին հեռանալ Պոլսէն: Այդոտ՝ որպէս զի վարչական ներդաշնակութիւնը հաստատէ երկար ժամանակի համար եւ օրէնքի ձեւը տայ անոր, ոչ միայն Երուսաղէմի պէս կարեւոր Աթոռի մը Պատրիարք նշանակել տուաւ Շղթայակիրը, այլ նաեւ իր օրով հետզհետէ Եջմիածնի համար իրենց դպրոցէն իր ուղած մարդիկը կաթողիկոս բնորել տուաւ: Կարապետ կթղ. Սելենցի եւ Աբրահամ կթղ. Խոշաբեցի: Առաջինը նոյն իսկ Պոլսոյ մէջ օծել տուաւ (1726 Փետր. 27 կիրակի) եւ ինքը Պոլսոյ Մայր-Եկեղեցւոյ մէջ Եպիսկոպոս ձեռնադրեցաւ անոր ձեռքով երեք օր ետքը. վասն զի 11 տարիներէ ի վեր դեռ վարդապետ էր հայոց պատրիարքը: Իսկ Աբրահամ Խոշաբեցին, Մշոյ Ս. Կարապետին Առաջնորդը, իր վաղեմի բարեկամներէն էր:

Այս բոլոր գործողութիւնները շատ բնական կերպով իրարու յաջորդեցին. վասն զի զեղծումներու տեղ անկեղծ ջանք, խօսքի տեղ գործ, դժուարութիւններու դէմ հաստատամտութիւն եւ այս բոլորին մէջ՝ նկարագրի մարդը:

* * *

Գիրք, գրականութիւն, բեմ, դպրոց ասոնց վրայ Այդոտը մտածեց իր դարուն մէջ: Իր դպրոցը, որուն մասին գրեթէ գաղափար չէ տրուած մեր եկեղեցական եւ մատենագրական պատմութեան մէջ, մեծ ազդեցութիւն ունեցաւ ոչ միայն իր ժամանակին վրայ, այլ եւ Հայ, Եկեղեցւոյ դաւանաբանական ըմբռնումներուն ու բացատրութիւններուն վրայ:

Գաղափար մը տալու համար իր դպրոցին վրայ, կրնանք ըսել թէ ինչ որ է հիմայ դպրե-